

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ Կայուն զարգացման կենտրոնի 2014թ.-ի փետրվար-մարտ ամիսների

2014 թ.-ի փետրվար-մարտ ամիսների ընթացքում, ԵՊՀ Կայուն զարգացման կենտրոնի գործունեության պլանի համաձայն, կատարվել են հետևյալ աշխատանքները.

- 2013թ.-ին կենտրոնի կողմից ընդունված որոշումների տեղեկատվության տարածում (Էլեկտրոնային – ԵՊՀ կայք էջ և թղթային տարբերակով՝ Երևանի համալսարան ամսաթերթ) ԵՊՀ-ի ֆակուլտետներում:
- ՀՀ լեռնահանքային արդյունաբերության թափոնների ուսումնասիրությունների արդյունքների վերլուծության հիման վրա պատրաստվել և հանձնվել են տպագրության հանրապետության առաջատար գիտական ամսագրերում երկու գիտական հոդվածներ. 1. ՀՀ ԳԱԱ Գիտություններ Երկրի մասին (լույս կտեսնի ապրիլին) և 2. ՀՀ ԵՊՀ Գիտական տեղեկագիր, Երկրաբանություն և աշխարհագրություն (սեպտեմբերին):
- <<ՀՀ մետաղական օգտակար հանածոների պոչամբարների շրջակա միջավայրի վրա ազդեցության վտանգների նվազեցմանն ուղղված պահանջների և խնդիրների վերահանումը>> թեմայով կլոր սեղանի կազմակերպման նպատակով նշված օբյեկտների հետ կապված վտանգների ու խնդիրների և նրանց դեմ ուղղված աշխատանքների տեսակների շրջանակի որոշում: Սկսվել են պոչամբարների կառուցման համար ինժեներաերկրաբանական պահանջների միջազգային մոտեցումների ուսումնասիրումն ու նյութերի հավաքագրումը՝ կապված հատկապես պոչամբարների ամբարտակների և հատակների կառուցմանը ներկայացվող նորմատիվների հետ: Երկրորդ կարևոր հարցը՝ կապված պոչամբարների, որպես հատուկ հիդրոտեխնիկական կառույցների հետ, վերաբերվում էր պոչամբարների վիճակի կայունության գնահատման համար անհրաժեշտ մոնիտորինգի իրականացման հարցերին: Ուսումնասիրության ուղղություններից մեկն էլ պոչատարների վիճակի վերաբերյալ նյութերի հավաքագրումն էր: Ուշադրության կենտրոնում էր նաև մի քանի տասնամյակ առաջ կառուցված և դեռևս շահագործվող պոչամբարների նախագծերի վերաբերյալ սակավաթիվ տեղեկատվության հավաքագրումը, հետագայում այդ պոչամբարների վիճակի և հնարավոր թերությունների շտկման համար միջոցառումների մշակման նպատակով:

Աշխատանքը կատարված է ԵՊՀ Կայուն զարգացման Կենտրոնի կողմից, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ:

«ԿԶԿ»-ի ղեկավար

Երկրաբանա-հանքաբանական գ. թ.

Ռ. Մովսեսյան